

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՃՅՈՒՂԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նորայր ՄԱԼԽԱՍՅԱՆ
ԵՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր. միջազգային առևտուր, արտահանում, ներմուծում, շուկա, համեմատական առավելություն, ապրանքային խմբեր:

Բալասսայի ինդեքս. Բ. Բալասսայի կողմից առաջարկվել է միջազգային առևտրի համեմատական առավելության գնահատման ինդեքսը: Նա բացահայտել է, որ "Համեմատական առավելություններն առաջանում են որպես տնտեսական գործոնների արդյունք և դրանք կարող են լինել չափելի և անչափելի": Համաձայն Բալասսայի առաջարկվում է մասնագիտացման հետևյալ ինդեքսը, որը կոչվում է Բալասսայի ինդեքս :

$$B_{ij} = 100 \times \frac{X_{ji}}{\sum_{j=1}^N X_{ji}} / \frac{\sum_{i=1}^N X_{ji}}{\sum_{j=1}^N \sum_{i=1}^M X_{ji}},$$

(1)

Որտեղ X_{ij} -ն նշանակում է j-րդ ապրանքի (ծառայության) արտահանումը i-րդ երկրից: Բալասսայի ինդեքսը (1) սահմանափակված է ներքևից 0-ով և չունի վերին սահման: Եթե երկիրը մասնագիտացված է որևէ մի ապրանքի կամ ապրանքային խմբի գործում, և այդ նշված արդյունաբերական ճյուղի միջինը մնացած երկրների միջինից ավելի է, ապա այդ ճյուղի ցուցանիշը մեծ է 100-ից, իսկ եթե այդ ցուցանիշը 100-ից փոքր է, ուրեմն արդյունաբերության այդ ճյուղն մյուս երկրների համեմատ ունի ավելի ցածր մասնագիտացում: Նշված ցուցանիշով ստացված արժեքը օգտագործվում է որպես միջնորդային մասնագիտացման և ներմուծողային առևտրի համեմատական կարևորության գնահատման համար: Հայտնի է (Balassa (1965)), որ որքան բարձր է միջնորդային մասնագիտացումը, այնքան մեծ է ինդեքսի ստացված ժամանակային շարքի ստանդարտ միջին քառակուսային շեղումը: Հարկ է նշել, որ Բալասսայի ինդեքսը (1) հնարավորություն չի տալիս ամբողջությամբ ներկայացնել երկրի առևտուրը, քանի որ այն ուսումնասիրում է միայն արտահանումը: Օրինակ, դիցույ՛ք երկիրն ունի որևէ ապրանքի արտադրության համեմատական բարձր առավելություն, սակայն միևնույն ժամանակ այդ ապրանքի ներմուծման ծավալը ավելի մեծ է, քան դրա արտահանումը: Այդպիսի օրինակ կարող է

ծառայել աղյուսակ 1-ում 2012թ.-ին ՀՀ ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտահանումը և ներմուծումը: Տարբեր հեղինակներ առաջարկում են ուսումնասիրել միջազգային առևտրի գնահատման այլ ցուցանիշներ՝ ընդգրկելով միաժամանակ ներմուծումը և արտահանումը:

Նորմալացված հաշվեկշռի և Նևենի ինդեքսը. Նորմալացված հաշվեկշռը տրվում է որպես առևտրի հաշվեկշռի արժեքի և լրիվ առևտրի քանորդ: Հաշվի առնելով այն, որ այս ինդեքսն ընդգրկում է ինչպես ներմուծումը (m), այնպես էլ արտահանումը (x), այն կարելի է օգտագործել երկրի տնտեսական և միջազգային առևտրի գնահատման համար: Այս գործոնը որոշվում է հետևյալ կերպ՝

$$NB_{ji} = \frac{x_{ji} - m_{ji}}{x_{ji} + m_{ji}},$$

(2) NB_{ji} ինդեքսը որոշելուց հետո պարզվում է, որ այն ընդունում է -1-ի և 1-ի միջակայքում ընկած արժեքները: Ըստ այդմ, եթե այն ընդունում է 1 արժեք, այսինքն՝ $m_{ji} = 0$, ուրեմն երկիրը մասնագիտացված է j -րդ ապրանքի արտադրության բնագավառում: Եթե այն -1 է, ուրեմն երկիրը j -րդ ապրանքի արտադրության բնագավառում մասնագիտացված չէ: Առաջարկված ինդեքսի (2), թերությունն այն է, որ դրանով հնարավոր է ուսումնասիրել միայն մեկ ապրանք՝ j -րդ ապրանքը, սակայն ստանալ համեմատական առավելության ամբողջական գնահատում հնարավոր չէ: Նևենը առաջարկել է նորմալացված հաշվեկշռի՝ NB_{ji} -ի ընդհանրացված բանաձև, որով կարելի է վերացնել NB_{ji} -ի թերությունները և ունի հետևյալ տեսքը՝

$$NEV_{ji} = \left(\frac{x_{ji}}{x_i} - \frac{m_{ji}}{M_i} \right) / \left(\frac{x_{ji}}{x_i} + \frac{m_{ji}}{M_i} \right),$$

(3) որտեղ X_i և M_i -ն համապատասխանաբար i -րդ երկրի ընդհանուր արտահանումը և ներմուծումն են: Սակայն այս դեպքում Նևենի (3) բանաձևով հնարավոր չէ տալիս հաշվի առնել աշխարհի արտահանումը և ներմուծումը:

Դոնգեսի և Ռայդելի ինդեքսը. Դոնգեսի և Ռայդելի (Donges, Riedel 1977) ինդեքսը հնարավորություն է տալիս վերացնել Նևենի ինդեքսի թերությունները և ներառում է երկրի և աշխարհի առևտրի ինդեքսները: Այս ինդեքսը տրվում է հետևյալ կերպ՝

$$DR_{ki} = \left[\left(\frac{(x_{ki} - m_{ki}) / (x_{ki} + m_{ki})}{(x_{kw} - m_{ki}) / (x_{ki} + m_{kw})} - 1 \right) \times [sign(x_{kw} - m_{kw})] \right],$$

(4)

որտեղ x_{ki} -ն նշանակում է k -րդ ապրանքի արտահանումը i երկրից, m_{ki} -ն k -րդ ապրանքի ներմուծումը i -րդ երկիր, իսկ x_{kw} և m_{kw} -ն՝ k -րդ ապրանքի աշխարհի արտահանումը և ներմուծումն են:

Աքուինոյի ինդեքսը. Աքուինոն իր 1999թ. (Aquino, 1999) առաջարկել է հետևյալ ինդեքսը՝

$$A_{ki} = 100 \times \left[\frac{x_{ki} / \sum_{k=1}^M x_{ki}}{\sum_{i=1}^M x_{ki} / \sum_{i=1}^N \sum_{k=1}^M x_{ki}} \right] / \left[\frac{m_{ki} / \sum_{k=1}^M m_{ki}}{\sum_{i=1}^N m_{ki} / \sum_{i=1}^N \sum_{k=1}^M m_{ki}} \right],$$

(5)

որտեղ x_{ki} Վն նշանակում է k -րդ ապրանքի արտահանումը i -րդ երկիր, իսկ m_{ki} -ն՝ k -րդ ապրանքի ներմուծումը i -րդ երկրից: Ինչպես տեսնում ենք, ցուցանիշը (5) նման է Բալասսայի արտահանման և ներմուծման գնահատման ցուցանիշին: Ցուցանիշի (5) համարիչում տրված է k -րդ ապրանքի մասը i -րդ երկրի արտահանման մեջ, հարաբերած երկրի k -րդ ապրանքի արտահանման մասին ընդհանուր արտահանման նկատմամբ: Նշված ցուցանիշի հայտարարը և համարիչը արտահայտում են ներմուծման նույն մեծությունները: Արդյունքում, կարելի է եզրակացնել, որ (5) ցուցանիշը գնահատում է երկրի մասնագիտացման աստիճանը: Աքուինոյի ինդեքսը հնարավորություն է տալիս վերացնել Բալասսայի ցուցանիշի թերությունները, քանի որ վերջինս օգտագործում է միայն արտահանման գործոնը: Սակայն հարկավոր է նշել, որ Աքուինոյի ինդեքսը (5) որոշ սահմանափակումներ ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս ստանալ Բալասսայի ցուցանիշի արտահանմանը և ներմուծմանը վերաբերող արժեքները:

Բալասսայի լոգարիթմական ինդեքսը. Բալասսայի միջազգային առևտրի համեմատական առավելության (1) ինդեքսը ներկայացվում է նաև հետևյալ ձևով՝

$$RCA = \ln \left(\frac{X_i}{M_i} \right) \times \left(\frac{\sum_{i=1}^n X_i}{\sum_{i=1}^n M_i} \right) \times 100,$$

(6)

որտեղ X և M -ը արտահանումը և ներմուծումն են համապատասխանաբար, իսկ i -ն ապրանքի խումբը: Ըստ Բալասսայի արտահանման ցուցանիշի

ցանկի (6) աղյուսակ 1-ում տրված են ՀՀ արտահանման ցուցանիշ-ները: Հաշվի առնելով այն, որ երկիրն ունի ապրանքի արտահանման համեմատական առավելություն, եթե Բալասայի դիտարկվող ինդեքսի արժեքը դրական է, առանձնացվել են ապրանքային այն խմբերը, որոնց համար Բալասայի ցուցանիշը ընդունում է բացասական արժեք: Աղյուսակ 1-ում տրված են նշված ապրանքային խմբերի արտահանման և ներմուծման ծավալները հազար ԱՄՆ դոլարով¹:

Աղյուսակ 1. ՀՀ ապրանքային խմբերի արտահանման և ներմուծման ծավալները հազար ԱՄՆ դոլարով:

		2011թ.		2012թ.		2013թ.	
		Արտ.	Ներ.	Արտ.	Ներ.	Արտ.	Ներ.
Կենդանի կենդանիներ	Ընդամենը	12210	3424	8770	4094	14576	7611
	ԱՊՅ երկրներ	1,2	232,2	32,4	15,4	20,3	5,9
	Այլ երկրներ	12208	3192	8737,7	4078,9	14556	7605
Զուկ և խեցգետնավորներ	Ընդամենը	15647	3562,2	21340	4365,7	32456	3560
	ԱՊՅ երկրներ	13059	367,7	19374	237,2	30659	113
	Այլ երկրներ	2587,9	3194,5	1965,8	4128,5	1796,6	3446
Կերային հատապտուղ և ընկույզ, ցիտրուսներ	Ընդամենը	15476	47282	24476	39094	28235	35381
	ԱՊՅ երկրներ	14227	259,2	23384	101,9	24355	319,5
	Այլ երկրներ	1249	47023	1092,7	38992	3969,7	35062
Սուրճ և այլ համեմունքներ	Ընդամենը	5735,1	31031	5900,1	29941	5067,8	28805
	ԱՊՅ երկրներ	2287,1	1364,4	2499,2	1211,7	2511	1007
	Այլ երկրներ	3448	29667	3400,9	28729	2556,8	27798
Բանջարեղենից, Պտուղներից, ընկույզից և բույսերից վերամշակված մթերք	Ընդամենը	12874	21259	17177	17714	18269	21126
	ԱՊՅ երկրներ	8917,2	2826,3	13520	2373	15193	5971
	Այլ երկրներ	3957,2	18433	3657,1	15341	3075,9	15155
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	Ընդամենը	147130	47121	186538	52723	213039	56584
	ԱՊՅ երկրներ	121032	28770	168827	27818	187789	26816
	Այլ երկրներ	26098	18351	17711	24905	25250	29768
Հանքաքար, խարամ և մոխիր	Ընդամենը	287440	3257,5	279345	627,5	303171	1092,8
	ԱՊՅ երկրներ	103,8	352,6	0	259,3	0	346,1
	Այլ երկրներ	287336	2904,9	279345	368,2	303171	746,7
Աղ, ծծումբ, հող և քար, նյութեր, կրաքար և ցեմենտ	Ընդամենը	9869,5	12153	14071	12742	15850	13375
	ԱՊՅ երկրներ	1874,4	1610,5	3055,6	990,6	2621,2	1190,7
	Այլ երկրներ	7995	10542	11016	11751	13229	12184
Կոշիկ, գուլգազուլպա	ընդամենը	1455,3	32051	2270,2	28272	2164,8	30240
	ԱՊՅ երկրներ	1216,1	573,2	2080,7	838,7	1751,8	544,5
	Այլ երկրներ	239,2	31478	189,5	27434	413	29696

¹ www.armstat.am

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ Գիտական հանդես

Իրեր՝ քարից, գիպսից	Ընդամենը	6553,9	18084	7004,2	18385	7012,3	19656
	ԱՊՅ երկրներ	3674,8	2529,9	4552	1780,1	5627,9	1640,8
	Այլ երկրներ	2879,1	15554	2452,2	16605	1384,4	18016
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	ընդամենը	196441	214869	173005	179140	188070	295347
	ԱՊՅ երկրներ	29542	43731	32613	10324	51459	7416,9
	Այլ երկրներ	166898	171138	140391	168816	136611	287930
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	Ընդամենը	120422	4261,5	110689	3797,1	95077	3461,3
	ԱՊՅ երկրներ	8,7	1815,4	20,4	1025,5	1403	1183,2
	Այլ երկրներ	120413	2446,1	110669	2771,6	93674	2278,1
Ալյումին և դրանից պատրաստված իրեր	Ընդամենը	91372	101069	88039	90773	85465	79779
	ԱՊՅ երկրներ	36,9	75345	114,6	68162	335,6	57473
	Այլ երկրներ	91335	25723	87925	22610	85129	22305
Այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և դրանցից պատրաստված իրեր	Ընդամենը	15364	151,4	19109	181,7	17522	76,9
	ԱՊՅ երկրներ	0	11,7	168,1	12	0	0
	Այլ երկրներ	15364	139,7	18941	169,7	17522	76,9
Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ	Ընդամենը	19785	37606	52,3	791,3	7335,3	7144,8
	ԱՊՅ երկրներ	19705	20935	20,5	18,3	27,3	4,9
	Այլ երկրներ	80,2	16671	31,8	773	7308	7139,9
Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր	Ընդամենը	840,2	1058,3	1014,5	1948,2	1745,6	820,1
	ԱՊՅ երկրներ	490,4	34,4	675,2	18,5	1234,9	50,1
	Այլ երկրներ	349,8	1023,9	339,3	1929,7	510,7	770

Արտահանման համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերը տրված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. 33 ապրանքային խմբերի արտահանման ցուցանիշները ըստ Բալասսայի (6) բանաձևի

		2011թ.	2012թ.	2013թ.
Կենդանի կենդանիներ	Ընդամենը	40,92489	24,67291	21,90826
	ԱՊՅ երկրներ	-169,484	24,09114	41,66209
	Այլ երկրներ	43,18204	24,67509	21,88741
Զուկ և խեցգետնավորներ	Ընդամենը	47,6381	51,39699	74,51761
	ԱՊՅ երկրներ	114,9157	142,606	188,8336
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՅ երկրներ	128,9274	176,0645	146,1178
Սուրճ և այլ համեմունքներ	ԱՊՅ երկրներ	16,62784	23,44838	30,80671
Բանջարեղենի, պտուղների ընկույզների և բույսերի վերամշակումից մթերք	ԱՊՅ երկրներ	36,98554	56,3565	31,4885
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	Ընդամենը	36,64985	40,92662	44,69906
	ԱՊՅ երկրներ	46,24639	58,40461	65,62243
	Այլ երկրներ	11,33525	-11,0419	-5,55016
Զանքաքար, խարամ և մոխիր	Ընդամենը	144,2083	197,5271	189,6726
	Այլ երկրներ	147,8842	214,7946	202,5129
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	Ընդամենը	-6,70018	3,214303	5,723756
	ԱՊՅ երկրներ	4,884477	36,48438	26,60517
	Այլ երկրներ	-8,90463	-2,09367	2,772475
Կոշիկ, գուլագուլպա	ԱՊՅ երկրներ	24,21155	29,42947	39,39847
Իրեր՝ քարից, գիպսից	ԱՊՅ երկրներ	12,01674	30,41057	41,55703
Բնական, արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	ԱՊՅ երկրներ	-12,6254	37,25544	65,30923
	Ընդամենը	107,5557	109,2339	111,7033
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	ԱՊՅ երկրներ	-171,913	-126,883	5,744915
	Այլ երկրներ	125,4223	119,4246	125,3057
	Ընդամենը	-3,2466	-0,99032	2,321201
Այլումին և դրանից պատրաստված իրեր	Այլ երկրներ	40,7875	43,98693	45,15756
	Ընդամենը	148,7083	149,8582	174,7444
	ԱՊՅ երկրներ	-	84,96764	-
Այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և դրանցից պատրաստված իրեր	Այլ երկրներ	151,2972	151,7731	174,7444
	Ընդամենը	-20,6728	-87,4471	0,847004
	ԱՊՅ երկրներ	-1,94888	3,654213	55,2894
Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ	Այլ երկրներ	-171,79	-102,709	0,749065
	Ընդամենը	-7,42854	-21,0036	24,31641
Արվեստի ստեղծագործություններ, հնաճոհ իրեր	ԱՊՅ երկրներ	85,53134	115,7913	103,1567

Աղյուսակ 3-ում տրված են նշված ապրանքային խմբերի արտահանման ծավալի և լրիվ արտահանման ծավալի հարաբերությունը արտահայտված տոկոսներով:

Աղյուսակ 3. ՀՀ ապրանքային խմբերի արտահանման ծավալի և լրիվ արտահանման ծավալի հարաբերությունը արտահայտված տոկոսներով

	2011թ.	2012թ.	2013թ.
Կենդանի կենդանիներ	0,91	0,63	0,98
Ձուկ և խեցգետնավորներ	1,17	1,54	2,19
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	1,15	1,77	1,9
Սուրճ և այլ համեմունքներ	0,42	0,42	0,34
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	0,96	1,24	1,23
Ռգելից և ոչ ոգելից ըմպելիք	11,02	13,51	14,4
Հանքաքար, խարամ և մոխիր	21,54	20,23	20,5
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	0,73	1,01	1,07
Կոշիկ, զուգագուլպա	0,1	0,16	0,14
Իրեր՝ քարից, գիպսից	0,49	0,5	0,47
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	14,72	12,53	12,71
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	9,02	8,01	6,42
Ալյումին և դրանից պատրաստված իրեր	6,84	6,37	5,77
Այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակե-րամիկա և դրանից պատրաստված իրեր	1,15	1,38	1,18
Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ	1,48	0,003	0,49
Արվեստի ստեղծագործություններ, հնաճոհ իրեր	0,06	0,07	0,11

Հայտնի է նաև Բալասսայի համեմատական առավելության հետևյալ ինդեքսը՝

$$RCA_{ij} = \frac{\frac{x_{ij}}{X_i}}{\frac{x_{aj}}{X_a}}$$

(7)

որտեղ՝ x_{ij} -ն i -րդ երկրից j -րդ ապրանքի արտահանումն է, X_i -ն i -րդ երկրի ընդհանուր արտահանումը, x_{aj} -ն տվյալ j -րդ ապրանքի արտահանման ծավալը ընտրված տարածաշրջանում, X_a -ն ընտրված տարածաշրջանի ամբողջ արտահանումը: Աղյուսակ 4-ում տրված են մի քանի երկրների արտահանման ցուցանիշները ըստ Բալասսայի (7) բանաձևի: Երկիրն ունի արտահանման համեմատական առավելություն, եթե Բալասսայի (7) ինդեքսի արժեքը ապրանքային տվյալ խմբի համար մեծ է 1-ից²:

Աղյուսակ 4. Մի քանի երկրների արտահանման ցուցանիշները ըստ Բալասսայի (7) բանաձևի³

Բրազիլիա	ԱՄՆ	Էկվադոր	Ջնդկաստան	Գանա	Պակիստան
0,0	2,02	0,27	0,00	0,57	0,05
17,40	0,09	0,00	0,00	0,00	0,00
0,07	0,51	0,00	0,79	0,00	0,00
0,75	0,32	20,16	1,65	7,24	0,76
4,53	1,32	0,18	2,65	0,03	4,95
3,06	0,58	36,22	1,02	5,14	0,66
1,96	0,16	0,77	0,75	0,00	11,14
6,71	0,05	11,03	2,23	83,53	0,09
17,41	0,71	0,05	0,12	0,07	0,00
0,78	1,45	0,42	1,19	0,72	0,26
0,14	1,30	0,11	0,02	0,05	0,02
9,01	1,71	4,12	1,65	0,53	0,67
0,42	0,95	0,49	0,01	0,07	0,00
23,39	1,29	0,01	1,15	5,42	0,05

² Balassa Index of Revealed Comparative advantage

[www.ecares.org/ecare/personal/concomi\\$/web/rea.pdf](http://www.ecares.org/ecare/personal/concomi$/web/rea.pdf)

³ Արված են հետևյալ նշանակումները՝ 1-Կենդանի կենդանիներ, 2-միս, 3-կաթնամթերք և թռչնի ձու, 4-ձուկ, 5-հացահատիկ, 6-բանջարեղեն և միրգ, 7-շաքար, 8-սուրճ, 9-կենդանիների համար նախատեսված սնունդ, 10-սնունդ և կիսապատրաստուկներ, 11-գոլպացուցիչ ըմպելիքներ, 12-ծխախոտ, 13-բնական մորթի, 14- բուսայուղ:

Աղյուսակ 5. ՀՀ ապրանքային խմբերի արտահանման ցուցանիշները ըստ Բալասսայի բանաձևի (7)

		2011թ.	2012թ.	2013թ.
Կենդանի կենդանիներ	ԱՊՀ երկրներ	0,001449	0,982199	1,79658
	Այլ երկրներ	1,072639	1,000067	0,999382
Զուկ և խեցգետնավորներ	ԱՊՀ երկրներ	8,085581	16,70974	29,68172
	Այլ երկրներ	0,184421	0,097408	0,057174
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՀ երկրներ	167,6947	366,5284	95,22022
	Այլ երկրներ	0,081148	0,044759	0,141425
Սուրճ և այլ համեմունքներ	ԱՊՀ երկրներ	9,070074	10,46695	14,17352
	Այլ երկրներ	0,62886	0,600725	0,522795
Բանջարեղենի, պտուղների, ընկույզի և բույսերի մասերի վերամշակումից մթերք	ԱՊՀ երկրներ	5,210007	5,875145	2,942401
	Այլ երկրներ	0,354497	0,245837	0,234703
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ	ԱՊՀ երկրներ	1,347339	1,715348	1,859993
	Այլ երկրներ	0,455464	0,200995	0,225292
Հանքաքար, խարամ և մոխիր	ԱՊՀ երկրներ	0,003336	-	-
	Այլ երկրներ	1,120976	1,704237	1,463506
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	ԱՊՀ երկրներ	1,43318	2,793183	1,85768
	Այլ երկրներ	0,933808	0,848845	0,916189
Կոշիկ, զուգագուլպա	ԱՊՀ երկրներ	46,72618	30,89627	44,94271
	Այլ երկրներ	0,167358	0,086025	0,194278
Իրեր՝ քարից, գիպսից	ԱՊՀ երկրներ	4,008042	6,712389	9,614911
	Այլ երկրներ	0,510746	0,387635	0,215405
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	ԱՊՀ երկրներ	0,738923	3,270931	10,89565
	Այլ երկրներ	1,066714	0,861117	0,745095
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	0,00017	0,000682	0,043168
	Այլ երկրներ	1,742035	1,36975	1,49696
Ալյումին և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	0,000542	0,001733	0,005451
	Այլ երկրներ	3,92744	4,009351	3,56262
Այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և դրանցից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	-	0,133197	-
	Այլ երկրներ	1,083751	1,061294	1
Թռչող և տիեզերական ապարատներ	ԱՊՀ երկրներ	1,789055	16,94893	5,426737
	Այլ երկրներ	0,009144	0,622425	0,996962
Արվեստի ստեղծագործություններ և հևանճ իրեր	ԱՊՀ երկրներ	17,95635	70,08776	11,5802
	Այլ երկրներ	0,430317	0,337657	0,3116

Այսպիսով, հիմնվելով Բալասսայի ինդեքսի հատկությունների վրա և համեմատելով այն աղյուսակ 4-ում տրված այլ երկրների օրինաակի հետ՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ն ունի առևտրի համեմատական առավելու-

թյուն ԱՊՀ արտահանվող հետևալ ապրանքային խմբերի նկատմամբ՝ կենդանի կենդանիներ, ձուկ և խեցգետնավորներ, կերային հատապտուղներ, ընկույզ, ցիտրուսներ, սուրճ և այլ համեմունքներ, բանջարեղենի, պտուղների, ընկույզի և բույսերի մասերի վերամշակումից ստացվող մթերք, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ, հանքաքար, խարամ և մոխիր, աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ, կոշիկ և զուգագուլպա, իրեր քարից և գիպսից, բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թռչող և տիեզերական ապարատներ, արվեստի ստեղծագործություններ և հնաոճ իրեր, իսկ այլ երկրներ՝ այլումին և դրանից պատրաստված իրեր, պղինձ և դրանից պատրաստված իրեր և այլ՝ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և իրեր դրանցից:

Արտահանման պաշտպանությունը. Նշված ապրանքային խմբերի արտահանման ծավալները մեծացնելու համար նպատակահարմար է դիտարկել այլ երկրներում կիրառվող ներքին արտադրողների իրավունքների պաշտպանության մեխանիզմները: Պետությունը նպատակ է հետապնդում ընդլայնել ներքին արտադրողների կողմից արտադրված ապրանքների արտահանման ծավալները՝ որոնելով նոր շուկաներ: Ուստի արտահանվող ապրանքներ արտադրող կազմակերպությունների նկատմամբ կարելի է կիրառել տարբեր հարկման մեխանիզմներ՝ կամ վերահսկել արտահանումը: Սակայն նման մոտեցումը չի կարող երկար տևել: Նման իրավիճակում, բնականաբար, հարց է առաջանում, թե ինչպես է հնարավոր պաշտպանել արտահանվող ապրանքներ արտադրող կազմակերպությունների շահերը և արդյունքում աջակցել նրանց, նպատակ ունենալով մեծացնել արտադրանքի ծավալները: ՀՀ-ն, լինելով փոքր երկիր, իհարկե իզոբու չէ՝ ազդել համաշխարհային շուկայի վրա աղյուսակ 1-ում տրված ապրանքների արտահանման բնագավառում, այնուամենայնիվ, ընդլայնելով ԱՊՀ-ի կամ այլ երկրների շուկաներում մրցունակ դեր ունեցող ապրանքների արտադրության ծավալները, ՀՀ-ն կստանա արտահանման նոր շուկաներ գտնելու հնարավորություն, կընդլայնի արտահանման ծավալները և կկուտակի ստացված շահույթը արտարժույթով: Այս նպատակի իրականացման համար դիտարկվել են արտահանման նպաստների տնտեսական առանձնահատկությունները, ինչպես նաև պետության՝ արտահանմանը խրախուսող քաղաքականության դերը: Հատկապես մեծ է պետության դերը, կապված արտահանողների նկատմամբ առևտրի ընդարձակման քաղաքականության մեջ: Սակայն այս դեպքում ներկրող երկրները կարող են բողոքարկել ՀՀ-ի կողմից իրականացվող առևտրի ընդարձակման քաղաքականությունը, քանի որ նման քաղաքականության իրականացման մեխանիզմներից մեկը հիմնված է դեմպինգի

վրա՝ արտահանվող ապրանքները վաճառվում են արհեստականորեն իջեցված գներով և դուրս են մղում ներկրող երկրի արտադրության ապրանքերը: Նման քաղաքականությունը կբողոքարկվի նաև արտահանող մրցակից այլ երկրների կողմից, քանի որ նրանց արտահանած ապրանքները դուրս կմղվեն ՀՀ-ի արտահանած ապրանքներով: Այսպիսով, ՀՀ-ն, իր արտահանման քաղաքականության հիմք ընդունելով դեմպինգը, պատճառ կհանդիսանա, որ ՀՀ-ից ապրանքներ ներկրող երկրում ինչպես տեղական արտադրության, այնպես էլ այլ երկրներից ներկրված ապրանքների դուրս մղվելուն: Նշենք, որ այժմ բացակայում է դեմպինգի տնտեսագիտական սահմանումը: Այնուամենայնիվ գոյություն ունեն դեմպինգի վերաբերյալ ձևակերպված հասկացություններ և դրա տեսակների տարբերակումներ: Չարգացած երկրների օրենսդրությամբ տարբերակվում է դեմպինգի հետևալ երկու տեսակը⁴

1. Գնային դեմպինգ, որը ենթադրում է արտահանված շուկայում ապրանքների վաճառքը ավելի ցածր գնով, քան իր ազգային շուկայում,
2. Արժեքային դեմպինգ, որը ենթադրում է արտահանված ապրանքների ինքնարժեքից ավելի ցածր գնով վաճառք:

Պաշտպանական հակադեմպինգային և փոխհատուցման միջոցները.

Համաձայն Մաքսային միության ընդունած պայմանագրի⁵՝ անդամ երկրները Մաքսային Միության ամբողջ տարացքում պետք է կիրառեն հակադեմպինգային միջոցներ: Պայմանագիրը կանոնակարգում է հակադեմպինգային միջոցների կիրառման հստակ ընթացակարգ, որտեղ ձևակերպված են պաշտպանական միջոցների անհրաժեշտ քայլերը, սկսած Մաքսային Միության պատասխանատու մարմին դիմում ներկայացնելուց, այդ դիմումի քննարկումից, որոշում կայացնելուց, մինչև որոշման կայացման արդյունքները շարադրելը: Մանրամասն ձևակերպված է դեմպինգի հասկացությունը, Մաքսային միության տնտեսության ճյուղին վերաբերող բացատրությունը, դեմպինգային ներկրման արդյունքում ՄՄ տնտեսության ճյուղին պատճառած վնասի վերլուծությունը: Հաշվի առնելով այն, որ ՌԴ-ն ԱՀԿ անդամ է, նշվում են նրա պարտավորությունները ԱՀԿ-ի նկատմամբ, ինչպես նաև ՌԴ-ի կողմից կիրառվող հակադեմպինգային միջոցների համապատասխանեցումը ԱՀԿ-ի պահանջներին: 2015 թվական

⁴ Сальваторе Д. Международная экономика//Пер. с английского под ред. А. Аракеяна, Изд-во Института внешних связей - М.: 1998 -714 с.

⁵ Соглашение о применении специальных защитных, антидемпинговых и компенсационных мер по отношению к третьим странам от 28 января 2008г.
<http://www.eurasiancommission.org/ru/aet/trade/polm/fag/pages/default.aspx#1>

Նից Մաքսային միությունը կոչվում է Եվրասիական Տնտեսական Միություն (ԵԱՏՄ), որի անդամ է Հայաստանի Հանրապետությունը: Հնարավոր է, որ ԵԱՏՄ պայմանագրում ընդգրկվի դեմպինգ կիրառող անդամ երկրի պատիժը, որպես տուրք⁶: Այժմ ԵԱՏՄ պայմանագրի նախագծում ընդգրկված է հակադեմպինգային տուրքերի կիրառմանը վերաբերող վերազգային մեխանիզմը: Նշված մեխանիզմը արդեն քննարկվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և նախատեսված է այն ներկայացնել ԵԱՏՄ անդամ-երկրների նախագահների և բարձրագույն խորհրդի նիստում: Ներկա փուլում քննարկվում են վերազգային տուրքերի տոկոսադրույքները, և դեռևս հայտնի չէ, կմտնեն արդյոք դրանք ԵԱՏՄ-ի վերջնական պայմանագրի մեջ: ՌԴ-ն և ՀՀ-ն ԱՀԿ-ի անդամներ են, հետևաբար նրանք պետք է հաշվի առնեն ԱՀԿ-ի անդամների պարտավորությունները և ԱՀԿ-ի կողմից նախատեսված հետազգային հակադեմպինգային միջոցների կիրառումը: ԵԱՏՄ երկրների արտահանման գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները ներկրող երկրում գույք չունեն, որպեսզի դրա նկատմամբ կիրառվի հակադեմպինգային պատիժ, ԵԱՏՄ պայմանագրում պետք է նախատեսվեն այնպիսի չափորոշիչային ակտեր, որոնք կանխում են ապրանքների և ծառայությունների արտահանումը արհեստականորեն իջեցված գներով:

Եզրակացություն. ՀՀ-ում վերջին 25 տարվա ընթացքում տեղի ունեցած տնտեսական բարեփոխումների և ազատականացման արդյունքում պայմանավորվեց միջազգային առևտրի հոսքերի մասնագիտացում: Ներկայացված աշխատանքում ուսումնասիրվում են ՀՀ-ի միջազգային առևտրի հոսքերը և դրանց մասնագիտացման զարգացումները: Տրվում են միջազգային առևտրի համեմատական առավելության ցուցանիշները և Բալասայի ցուցանիշի հաշվարկի հիման վրա առանձնացվում են ապրանքային այն խմբերը, որոնցով բնութագրվում է ՀՀ միջազգային առևտրի համեմատական առավելությունը: Առաջարկվում են ապրանքների խմբերի գնահատականներ, կախված դրանց ծավալներից՝ արտահայտված ԱՄՆ դոլարով:

⁶ <http://www.eurasiancommission.org/ru/aet/trade/polm/fag/pages/default.aspx#1>

Գրականություն

1. Balassa B. Trade liberation and Revealed Comparative advantage , The Manchester School of Economic and Social Studies. 33(2), pp. 99-123.
2. Neven D. Trade Liberalization with Eastern Nation: How Sensitive?. European Union Trade with Eastern Europe: adjustment and opportunities. CEPR, pp.84-107, 1995.
3. Donges J.B., Riedel J. The Expansion of Manufactured Exports in Developing Countries: an Empirical assessment of supply and demand Issues. Weltwirtschaftliches archive, vol. 113, pp. 24-43, 1997.
4. Aquino A. Specialization Patterns in Europe in weltwirtschaftliches. Archive. V.15, p3-31, 1999.
5. Balassa Index of Revealed Comparative advantage www.ecares.org/ecare/personal/concom.
6. Соглашение о применении специальных защитных, антидемпинговых и компенсационных мер по отношению к третьим странам от 28 января 2008г. <http://www.eurasiancommission.org/ru/aet/trade/polm/fag/pages/default.aspx#1>
7. Сальваторе Д. Международная экономика//Пер. с английского под ред. А. Аракеляна, Изд-во Института внешних связей - М.: 1998 -714 с.

Նորայր ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀՀ տնտեսության ներդրուչային մասնագիտացման ցուցանիշները

Բանալի բառեր. միջազգային առևտուր, արտահանում, ներմուծում, շուկա, համեմատական առավելություն, ապրանքային խմբեր

Աշխատանքը նվիրված է ՀՀ միջազգային առևտրի մասնագիտացման գնահատմանը: Առաջարկվում են արտահանվող ապրանքների խմբերի գնահատականներ՝ հիմնված Բ. Բալասայի համեմատական առավելության ինդեքսի վրա: Երկրի միջազգային առևտրի կառուցվածքի և մասնագիտացման գնահատման համար այժմ մշակվել են տարբեր մոտեցումներ և ցուցանիշներ, որոնցով հնարավոր է գնահատել երկրի միջազգային առևտրի համեմատական առավելությունը:

Норайр МАЛХАСЯН

Показатели внутриотраслевой специализации в экономике РА

Ключевые слова. международная торговля, экспорт, импорт, рынок, сравнительное преимущество, группы продуктов

Работа посвящена оценке специализации международной торговли РА. Предлагаются оценки экспортируемых групп продуктов, основанные на индексе сравнительного преимущества В. Баласса.

Norayr MALKHASYAN

Indicators of intra branch specialization in the Armenian economy

Keywords: international trade, export, import, market, comparative advantage, product groups

The aim of the research is to evaluate the specialization of the RA international trade. The assessment of the classes of the exported goods is proposed based on the revealed comparative advantage introduced by B. Balassa.